		<p>6) ճիշտ է պատկերում պայմանականությունների նշագրումները և չափագրումները,</p> <p>7) ճիշտ է պատկերում կենսաբժշկական համակարգերում օգտագործվող էլեկտրասարքավորումների և դրանց կառուցվածքային դետալների ու կիսահաղորդչային սարքերի պայմանական նշանակումները,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում գծագրական երկրաչափության հիմնական դրույթները,</p> <p>9) պահպանում է գծագրման կանոնները:</p>
8.	Ուսումնառության արդյունք 2	Կատարել երկրաչափական կառուցումներ
9.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է կառուցում զուգահեռ և ուղղահայաց գծերը,</p> <p>2) ճիշտ է կատարում ուղիղների բաժանումը հատվածների,</p> <p>3) ճիշտ է կատարում անկյունների և աղեղների բաժանումը,</p> <p>4) ճիշտ է կատարում բազմանկյունների և տարբեր կորագծերի կառուցումը,</p> <p>5) ճիշտ է կառուցում կետի, գծի, հարթության պրոյեկցիան,</p> <p>6) ճիշտ է որոշում ուղիղների հարաբերական դիրքերը,</p> <p>7) ճիշտ է պատկերում տրված դետալի գծագրերը տարբեր հարթություններում,</p> <p>8) ճիշտ է պատկերում առաջադրված դետալների և հանգույցների կտրվածքները տարբեր հարթություններում:</p>
10.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել սահուն անցումներ և լծորդումներ
11.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում անցումների և լծորդումների տեսակները,</p> <p>2) ճիշտ է կառուցում անմիջական անցումներ,</p> <p>3) ճիշտ է կառուցում է սահուն անցումներ,</p> <p>4) ճիշտ է կառուցում լծորդումներ:</p>

12.	Ուսումնառության արդյունք 4	Կարողալ հանգույցների ու մեքենամասերի աշխատանքային գծագրերը, դրանց պայմանական նշանակումները և մասնագրերը
13.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում հանգույցների և մեքենամասերի հավաքական գծագրերում առանձին մեքենամասերի դիրքավորման նշանակումները, 2) ճիշտ է բացատրում հավաքական գծագրում պայմանական նշանակումները՝ երիթային, բազմաերիթային միացություններ, ատամնաանվային կառչում, առանցքակալային նստեցվածք, եռակցման և գամային միացություն և նմանատիպ այլ նշանակումներ, 3) ճիշտ է ներկայացնում հավաքական գծագրերում պատկերված նստեցվածքների պայմանական նշանները, 4) ճիշտ է ներկայացնում հավաքական գծագրի և մասնագրի փոխադարձ կապը, 5) օգտվելով հավաքական գծագրից՝ ճիշտ է ընտրում համապատասխան մեքենամասի աշխատանքային գծագիրը, 6) ճիշտ է բացատրում հավաքական գծագրի տեխնիկական պահանջները:
14.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել էլեկտրական շղթաների սխեմաները
15.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում էլեկտրական շղթաներում կիրառվող պայմանական նշանակումները, 2) ճիշտ է ներկայացնում էլեկտրական շղթաների սխեմաների մշակման տեխնիկական պահանջները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»		

16.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-002
17.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողներին տալ գիտելիքներ բժշկական էլեկտրասարքավորումների շահագործման, տեղակայման և կարգավորման գործառույթներում մենեջմենթի առանձնահատկությունների, կազմակերպության կառավարման տարբեր ձևերի, նրա ռեսուրսների դրամավարկային և հարկային քաղաքականության մասին, ձևավորել տնտեսական տեղեկատվության կիրառման կարողություններ:
18.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
19.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
20.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
21.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կազմակերպության ռեսուրսները և դրանց օգտագործման մակարդակի գնահատման ցուցանիշները
22.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում և բնութագրում բժշկական էլեկտրասարքավորումների շահագործման, տեղակայման և կարգավորման աշխատանքում օգտագործվող ռեսուրսների կազմը, 2) ճիշտ է բնութագրում նյութական ռեսուրսները և գնահատում դրանց օգտագործման մակարդակը, 3) ճիշտ է բնութագրում աշխատանքային ռեսուրսները և գնահատում դրանց օգտագործման մակարդակը, 4) ճիշտ է բնութագրում բժշկական էլեկտրասարքավորումների շահագործման, տեղակայման և կարգավորման աշխատանքում ֆինանսական ռեսուրսները:
23.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել գնագոյացման հետ կապված հասկացությունները և մեխանիզմները
24.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում գնի տարբեր մակարդակների կազմը և կապը, 2) ճիշտ է ներկայացնում արտադրանքի ինքնարժեքի ձևավորման մեխանիզմը, 3) ճիշտ է մեկնաբանում անհատական գինը շուկայական գնի վերածվելու մեխանիզմը:
25.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հարկային և մաքսային օրենսդրության հիմնական դրույթները, հաշվարկել հարկերը

26.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հարկային և մաքսային օրենսդրությանը վերաբերող իրավական ակտերը, 2) ճիշտ է բացատրում հարկերի առանձին տեսակների հաշվարկման կարգը և առանձնահատկությունները, 3) ճիշտ է հաշվարկում հարկերի գումարները շինարարական համալիրների համար:
27.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել կառավարման մեթոդները և կառավարման ապարատի կառուցվածքը
28.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում մենեջմենթի էությունը և խնդիրները, 2) ճիշտ է ներկայացնում կառավարման մեթոդների բովանդակությունը, 3) ճիշտ է ներկայացնում մասնագիտական գործառույթներում կառավարչական որոշումների ընդունման տեսական հիմունքները, 4) ճիշտ է ներկայացնում կոլեկտիվի աշխատանքի հազմակերպման հիմունքները, 5) ճիշտ է ներկայացնում մենեջմենթի առանձնահատկությունները բժշկական սարքավորումների շահագործման, տեղակայման և կարգավորման գործառույթներում:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱ»		
29.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-003
30.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել էլեկտրատեխնիկայի հիմնական հասկացությունների, հաստատուն և փոփոխական հոսանքների էլեկտրական շղթաների, դրանցում ընթացող էլեկտրամագնիսական երևույթների վերաբերյալ գիտելիքներ և գործնականում դրանք կիրառելու կարողություններ:
31.	Մոդուլի տևողությունը	90 ժամ
32.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀ-ԱԱՕ-5-21-001 «Անվտանգություն և առաջին օգնություն» մոդուլը:
33.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

34.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել էլեկտրական և մագնիսական դաշտերի առաջացումը և բնութագրերը
35.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում էլեկտրական դաշտի առաջացումը, 2) ճիշտ է բացատրում մագնիսական դաշտի առաջացումը, 3) ճիշտ է ներկայացնում էլեկտրական և մագնիսական դաշտերի բնութագրերը:
36.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել հաստատուն հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները և հաշվարկել շղթայի պարամետրերը
37.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի գծային էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի գծային էլեկտրական շղթայի աշխատանքային ռեժիմները, 3) ճիշտ է հաշվում հաստատուն հոսանքի առաջադրված գծային էլեկտրական շղթայի պարամետրերը, 4) ճիշտ է ներկայացնում հաստատուն հոսանքի ոչ գծային էլեկտրական շղթայի առանձնահատկությունները, 5) ճիշտ է հաշվում հաստատուն հոսանքի առաջադրված ոչ գծային էլեկտրական շղթայի պարամետրերը:
38.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել փոփոխական հոսանքի էլեկտրական շղթայի հիմնական հասկացությունները, հաշվարկել շղթայի պարամետրերը
39.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի շղթայի տարրերն ու պարամետրերը, 2) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների հիմնական հասկացությունները, 3) ճիշտ է ներկայացնում փոփոխական հոսանքի միաֆազ և եռաֆազ շղթաների աշխատանքային ռեժիմները, 4) ճիշտ է հաշվում փոփոխական հոսանքի առաջադրված միաֆազ և եռաֆազ շղթաների պարամետրերը, 5) ճիշտ է ներկայացնում ռեզոնանսային երևույթները փոփոխական հոսանքի շղթայում:

40.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել մագնիսական շղթայի հիմնական հասկացությունները, հաշվարկել մագնիսական շղթան
41.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում էլեկտրամագնիսական ինդուկցիայի և փոխադարձ ինդուկտիվության հասկացությունները, 2) ճիշտ է ներկայացնում մագնիսական շղթայի հիմնական հասկացությունները, 3) ճիշտ է կատարում հանձնարարված մագնիսական շղթայի հաշվարկը, 4) ճիշտ է ներկայացնում էլեկտրական և մագնիսական դաշտի անալոգիան:
42.	Ուսումնառության արդյունք 5	Ներկայացնել էլեկտրական շղթաների անցումային պրոցեսները
43.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում շղթաներում անցումային պրոցեսների առաջացումը, 2) ճիշտ է ներկայացնում անցումային պրոցեսների գործնական կիրառման տեղը տարբեր շղթաներում, 3) ճիշտ է ներկայացնում տիպային անցումային պրոցեսների հաշվարկման կարգը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՄԸ «ԿԻՐԱՌԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԿԱ»		
44.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-004
45.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել էլեկտրական սարքավորումների աշխատանքի կինեմատիկական կապերի, մեխանիզմներում կիրառվող փոխանցման տեսակների առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ և գործնականում դրանք կիրառելու կարողություններ:
46.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
47.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
48.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

49.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ստատիկայի հիմնական հասկացությունները
50.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում ուժերի փոխազդեցությունները, 2) ճիշտ է բացատրում հարթ և տարածական ուժային համակարգերը, նրանց հավասարակշռության պայմանը, 3) ճիշտ է ներկայացնում ծանրության կենտրոնի հասկացությունը, կոորդինատների որոշման մեթոդաբանությունը:
51.	Ուսումնառության արդյունք 2	Բացատրել էլեկտրական սարքավորումների կինեմատիկական կապերը
52.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում էլեկտրական մեքենաների այն հանգույցները, որտեղ առաջանում են ուժեր, 2) ճիշտ է բացատրում ուժերի առաջացումը, 3) ճիշտ է բացատրում ուժերի մոմենտների առաջացումը էլեկտրատեխնիկական սարքավորումներում:
53.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել մեխանիզմներում կիրառվող փոխանցումները
54.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում փոկային փոխանցումը, 2) ճիշտ է ներկայացնում ատամնանիվային փոխանցումը, 3) ճիշտ է ներկայացնում որդնյակային փոխանցումը, 4) ճիշտ է ներկայացնում կցորդիչների դերը, 5) ճիշտ է ներկայացնում ռեդուկտորների գործնական կիրառման անհրաժեշտությունը, 6) ճիշտ է բացատրում ռեդուկտորի և շարժաբերի համակցման սկզբունքը:
55.	Ուսումնառության արդյունք 4	Բացատրել մեխանիզմների շարժական մասերի պատրաստման համար օգտագործված նյութերի մեխանիկական հատկությունների փոփոխությունները
56.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում պարզագույն ձևախեղման ազդեցությունները մեխանիզմների դետալներում, 2) ճիշտ է ներկայացնում մեխանիզմների դիմացկանությանը և կոշտությանը վերաբերող պահանջները, 3) ճիշտ է ներկայացնում լիսեռի պատրաստման համար օգտագործված նյութի հատկությունների փոփոխությունները, 4) ճիշտ է ներկայացնում առանցքակալների պատրաստման համար օգտագործված նյութի հատկությունների փոփոխությունները,

		<p>5) ճիշտ է ներկայացնում ռոտորի պատրաստման համար օգտագործված նյութի հատկությունների փոփոխությունները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում կոնտակտների պատրաստման համար օգտագործված նյութի հատկությունների փոփոխությունները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում լիսեռի, առանցքակալների, ռոտորի, կոնտակտների պատրաստման համար օգտագործված նյութի հատկությունների փոփոխությունների գործնական կիրառումը:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՎ ՄԻԿՐՈՊՐՈՑԵՍՈՐԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱ»		
57.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-005
58.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել էլեկտրոնիկայի հիմնական հասկացությունների, կիսահաղորդչային սարքերի վերաբերյալ տեսական գիտելիքներ, միկրոպրոցեսորային և իմպուլսային տեխնիկան գործնականում օգտագործելու կարողություններ:
59.	Մոդուլի տևողությունը	108 ժամ
60.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ԲՏՄՆ-5-21-003 «Էլեկտրատեխնիկա» մոդուլը:
61.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
62.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել կիսահաղորդչային սարքերը աշխատանքի սկզբունքը
63.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում էլեկտրասարքավորումներում կիսահաղորդչային սարքերի կիրառման առավելությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում էլեկտրասարքավորումներում կիսահաղորդչային սարքերի կիրառման թերությունները,</p> <p>3) ճիշտ է բացատրում էլեկտրասարքավորումներում օգտագործվող կիսահաղորդչային սարքերի՝ դիոդների, տիրիստորների, տրանզիստորների, միկրոսխեմաների, աշխատանքը,</p>

		<p>4) ճիշտ է ներկայացնում ֆոտոէլեկտրոնային տարրերի տեսակները, նշանակությունը, կիրառման տեղը և աշխատանքի սկզբունքը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում կիսահաղորդչային սարքերի մակնիշավորումը,</p> <p>6) ճիշտ է բացատրում կիսահաղորդչային սարքերի աշխատանքային բնութագրերը:</p>
64.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել էլեկտրոնային սարքավորումների տեսակները, աշխատանքի սկզբունքը և կիրառման բնագավառները
65.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է դասակարգում կիսահաղորդչային ուղղիչ սարքերը և ներկայացնում դրանց նշանակությունը, կիրառման բնագավառները,</p> <p>2) ճիշտ է բացատրում կիսահաղորդչային ուղղիչ սարքերի աշխատանքի սկզբունքը,</p> <p>3) ճիշտ է հանում կիսահաղորդչային ուղղիչ սարքերի բնութագրերը՝ ըստ տրված տեխնիկական առաջադրանքի,</p> <p>4) ճիշտ է դասակարգում ստաբիլիզատորները, բացատրում ստաբիլիզատորների աշխատանքի սկզբունքը, հանում ստաբիլիզատորի բնութագրերը,</p> <p>5) ճիշտ է դասակարգում կիսահաղորդչային ուժեղացնող սարքերը և ներկայացնում դրանց նշանակությունն ու կիրառման բնագավառները,</p> <p>6) ճիշտ է բացատրում կիսահաղորդչային ուժեղացնող սարքերի հիմնական ցուցանիշները, պարամետրերը և աշխատանքի սկզբունքը,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում թվային և այբուբենթվային արտացոլիչների տեսակները և կիրառությունը, դրանց աշխատանքային բնութագրերը,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում իմպուլսային սարքերի նշանակությունը, կիրառման բնագավառները, աշխատանքի սկզբունքը:</p>
66.	Ուսումնառության արդյունք 3	Տարբերակել բժշկական էլեկտրասարքավորումներում օգտագործվող միկրոպրոցեսորների և միկրոկոնտրոլերների տարատեսակները
67.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է տարբերակում է Intel, Atmel, Motorola և այլ ընկերությունների միկրոպրոցեսորները,</p> <p>2) ճիշտ է տարբերակում է միկրոպրոցեսորների հիշողության կազմակերպման կառուցվածքները,</p>

		3) ճիշտ է ներկայացնում միկրոպրոցեսորային, միկրոկոնտրոլերային սարքավորումների արտաքին տվյալների և ծրագրային հիշողության կազմակերպման, ընդարձակման եղանակները:
68.	Ուսումնառության արդյունք 4	Կատարել ծրագրային և ապարատային կցորդումներ միկրոկոնտրոլերի հետ
69.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում միկրոպրոցեսորների, միկրոկոնտրոլերների հիմնական պարամետրերը և ցուցանիշները, 2) ճիշտ է բացատրում միկրոպրոցեսորների, միկրոկոնտրոլերների ճարտարապետության մոդուլամայրուղային սկզբունքը, 3) ճիշտ է բացատրում հասցեների, տվյալների, կառավարման մայրուղիների կազմակերպման առանձնահատկությունները, տարբերակում միկրոպրոցեսորները և միկրոկոնտրոլերների հիմնական հանգույցները, 4) ճիշտ է բացատրում միկրոկոնտրոլերների ապարատային միջոցների նշանակությունները, 5) ճիշտ է իրականացնում տեսատիպի ապարատային և ծրագրային կցորդումը միկրոկոնտրոլերի հետ, 6) ճիշտ է իրականացնում ստեղնաշարի ապարատային և ծրագրային կցորդումը միկրոկոնտրոլերի հետ, 7) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
70.	Ուսումնառության արդյունք 5	Կատարել բժշկական էլեկտրասարքավորումներում օգտագործվող էլեկտրոնային սխեմաների ու միկրոպրոցեսորների միացման աշխատանքներ
71.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային և միկրոպրոցեսորային սարքերի կիրառման առավելությունը, 2) ճիշտ է ներկայացնում բժշկական սարքավորումներում օգտագործվող էլեկտրոնային սխեմաներն ու միկրոպրոցեսորները, 3) ճիշտ է բացատրում էլեկտրոնային սխեմաների աշխատանքի սկզբունքը, 4) ճիշտ է ներկայացնում բժշկական սարքավորումներում կիրառվող իմպուլսային և թվային սարքերը ու նրանց աշխատանքի սկզբունքը, 5) ճիշտ է կատարում էլեկտրոնային սխեմաների և միկրոսխեմաների միացումները:

72.	Ուսումնառության արդյունք 6	Կատարել բժշկական էլեկտրասարքավորումներում օգտագործվող կիսահաղորդչային սարքերի և միկրոպրոցեսորների ընտրություն և տեղակայում
73.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում կիսահաղորդչային սարքերը, 2) ճիշտ է ներկայացնում կիսահաղորդչային սարքերի գործնական կիրառման տեղը շղթաներում, 3) ճիշտ է կատարում է կիսահաղորդչային սարքերի միացումը էլեկտրոնային սխեմայում, 4) ճիշտ է կատարում կիսահաղորդչային սարքերի համաձայնեցումը էլեկտրական սխեմայում, 5) ճիշտ է ընտրում, տեղակայում և կարգաբերում իմպուլսային և թվային սարքերը, 6) ճիշտ է ընտրում, տեղակայում միկրոպրոցեսորը, 7) ճիշտ է կատարում միկրոպրոցեսորի համաձայնեցումը էլեկտրական սխեմայում, 8) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
74.	Ուսումնառության արդյունք 7	Բացատրել ուժեղարարի աշխատանքի սկզբունքը և կիրառման բնագավառները
75.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տարբերում ուժեղարարի տեսակները 2) ճիշտ է հավաքում է ուժեղարար, համալրում ուժեղարարի ուժեղացման գործակիցը՝ ապահովելով մուտքային և ելքային ազդանշանի մեծությունները և հաճախային բնութագրերը
76.	Ուսումնառության արդյունք 8	Ներկայացնել գեներատորի տեսակները, աշխատանքի սկզբունքը և կիրառման բնագավառները
77.	Կատարման չափանիշները	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում գեներատորի տեսակները, դասակարգումը և մակնշումը, 2) ճիշտ է ներկայացնում գեներատորի աշխատանքի սկզբունքը և կիրառումը, 3) ճիշտ է գնահատում գեներատորի ազդանշանները չափիչ սարքերի վրա:
Մ Ո Ղ Ո Ւ Լ Ի Ա Ն Վ Ա Ն Ո Ւ Մ Ը « Է Լ Ե Կ Տ Ր Ա Տ Ե Ն Ն Ի Կ Ա Կ Ա Ն Ն Յ Ո Ւ Թ Ե Ր Ի Ը Ն Տ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն »		
78.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-006
79.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ մեկուսիչ նյութերի, հաղորդիչների, կիսահաղորդիչների, մագնիսական և կոնստրուկցիոն նյութերի հատկությունների վերաբերյալ, ինչպես նաև

		կենսաբժշկական էլեկտրասարքավորումների տեղակայման, կարգավորման և շահագործման աշխատանքներում դրանց կիրառման կարողություններ:
80.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
81.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՔՏՄԼ-5-21-003 «Էլեկտրատեխնիկա» մոդուլը:
82.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
83.	Ուսումնառության արդյունք 1	Դասակարգել էլեկտրատեխնիկական նյութերը
84.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է դասակարգում էլեկտրատեխնիկական նյութերը՝ ըստ նշանակության, 2) ճիշտ է տարբերակում է էլեկտրատեխնիկական նյութերի մակնիշավորումը:
85.	Ուսումնառության արդյունք 2	Ընտրել մեկուսիչ նյութեր
86.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մեկուսիչ նյութերի տեսակները, 2) ճիշտ է ընտրում մեկուսիչ նյութերն՝ ըստ նշանակության:
87.	Ուսումնառության արդյունք 3	Ընտրել հաղորդիչներ
88.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հաղորդիչ նյութերի տեսակները, 2) ճիշտ է ներկայացնում փաթուփային հաղորդալարերի տեսակները, 3) ճիշտ է ընտրում էլեկտրասարքավորումների փաթուփային հաղորդալարերը:

89.	Ուսումնառության արդյունք 4	Ընտրել մագնիսական նյութեր
90.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում մագնիսական նյութերի տեսակները, 2) ճիշտ է ընտրում բժշկական սարքավորումներում օգտագործվող մագնիսական նյութերը:
91.	Ուսումնառության արդյունք 5	Ընտրել կիսահաղորդիչներ
92.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կիսահաղորդչային նյութերի տեսակները, 2) ճիշտ է ընտրում էլեկտրասարքավորումներում օգտագործվող կիսահաղորդչային նյութերը:
93.	Ուսումնառության արդյունք 6	Ընտրել կոնստրուկցիոն նյութեր
94.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում կոնստրուկցիոն նյութերի տեսակները, 2) ճիշտ է ընտրում էլեկտրասարքավորումներում օգտագործվող կոնստրուկցիոն նյութերը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՍՏԱՆԴԱՐՏԱՑՈՒՄ ԵՎ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՈՒՄ»		
95.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-007
96.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել չափիչ, ստուգիչ սարքավորումների և գործիքների օգտագործման և չափումներ կատարելու կարողություններ, սերտիֆիկացման հիմնական հասկացությունների վերաբերյալ գիտելիքներ:
97.	Մոդուլի տևողությունը	90 ժամ
98.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԲՏՄՆ-5-21-005 «Էլեկտրոնային և միկրոպրոցեսորային տեխնիկա» մոդուլը:
99.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
100.	Ուսումնառության արդյունք 1	Դասակարգել չափիչ, ստուգիչ սարքերն ու գործիքները
101.	Կատարման չափանիշներ	1) ճիշտ է ներկայացնում հիմնական ֆիզիկական մեծությունների գրառման ձևերը, չափողականությունները,

		<p>2) ճիշտ է ներկայացնում չափիչ, ստուգիչ սարքերի և գործիքների խմբերը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում չափիչ, ստուգիչ սարքերի և գործիքների կիրառման ոլորտները:</p>
102.	Ուսումնառության արդյունք 2	Օգտագործել փականագործական և չափիչ գործիքներն՝ ըստ նշանակության
103.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է օգտագործում պտուտակահաններ, բանալիներ, հարթաշուրթեր,</p> <p>2) ճիշտ է բացատրում ձողակարկիների կառուցվածքը և դրանով իրականացնում հանձնարարված չափումները,</p> <p>3) ճիշտ է օգտվում միկրոմետրից և չափածողից, մեկնաբանում վերջիններիս չափելու ճշտությունը,</p> <p>4) ճիշտ է օգտվում ունիվերսալ անկյունաչափից, կալիբրներից, բացակաչափից, շաբլոններից և պարուրակաչափերից,</p> <p>5) պահպանում է անվտանգության կանոնները:</p>
104.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել չափիչ և ստուգիչ սարքավորումներն ըստ նշանակության և չափման բնութագրերի օգտագործման կարգը
105.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ընտրում էլեկտրական մեծությունների համապատասխան չափիչ ստուգիչ սարքավորումը՝ առաջադրված շղթայում լարում, հոսանքի ուժ, դիմադրություն, ունակություն, ինդուկտիվություն, հաճախականություն, հզորություն չափելու համար,</p> <p>2) ճիշտ է ընտրում առաջադրված սարքավորման ոչ էլեկտրական մեծությունների չափիչ ստուգիչ սարքավորումը,</p> <p>3) ճիշտ է ընտրում առաջադրված էլեկտրական մեծության չափիչ սարքը ըստ ճշտության դասի,</p> <p>4) ճիշտ է չափում և գրանցում առաջադրված էլեկտրական մեծությունները,</p> <p>5) ճիշտ է որոշում շենքի ներքին էլեկտրական ցանցի առաջադրված տեղամասում մալուխի վնասված տեղը,</p> <p>6) ըստ անհրաժեշտության ճիշտ է ընտրում և փոխում չափման տիրույթները,</p> <p>7) պահպանում է աշխատանքի անվտանգության պայմանները:</p>
106.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել չափիչ արտադրանքի որակը և սերտիֆիկացման համակարգերը
107.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում սերտիֆիկացման փորձարկումները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում համապատասխանության նշանի և սերտիֆիկատի ստացման կարգը:</p>

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՎՏՈՄԱՏԻԿԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ»

108.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-008
109.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ ավտոմատիկայի հիմնական հասկացությունների վերաբերյալ, ավտոմատիկայի տարրերը և ավտոմատ կառավարվող համակարգերը գործնականում կիրառելու կարողություններ::
110.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
111.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԲՏՄՆ-5-21-005 «Էլեկտրոնային և միկրոպրոցեսորային տեխնիկա» մոդուլը:
112.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
113.	Ուսումնառության արդյունք 1	Կազմել տրամաբանական կերպափոխման սխեմաներ
114.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ավտոմատ սարքավորումների տարրերի աշխատանքի սկզբունքները և դրանց բնութագրերը, 2) ճիշտ է որոշում անալոգային ավտոմատ համակարգերի որակական ցուցանիշները, 3) ճիշտ է կիրառում կարգաբերման և կայունության պաշարի ապահովման մեթոդները, 4) ճիշտ է կատարում տեղեկատվության թվային ներկայացման եղանակները, 5) ճիշտ է կազմում տրամաբանական կերպափոխման սխեմաները, 6) ճիշտ է կիրառում տեղեկատվության հավաստիության վերստուգման եղանակները, 7) ճիշտ է կատարում սխալանքների գնահատումը:
115.	Ուսումնառության արդյունք 2	Կիրառել թվա-անալոգային և անալոգա-թվային կերպափոխիչների կառուցվածքային սխեմաներ
116.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում տարրերի աշխատանքի սկզբունքները,

		<ol style="list-style-type: none"> 2) ճիշտ է տարբերակում տարրերի նշանակումները, գործողությունները և կիրառման եղանակները, 3) ճիշտ է կարդում ազդանշանների համեմատման իրական սխեմաները, 4) ճիշտ է կարդում էլեկտրոնային կարգավորիչների կառուցվածքային սխեմաները և կարգաբերման եղանակները, 5) ճիշտ է տարբերակում գործադիր սարքերի տարբեր տեսակները և դրանց միացման սխեմաները, 6) ճիշտ է տիրապետում թվա-անալոգային և անալոգա-թվային կերպափոխիչների կառուցվածքային սխեմաներին և աշխատանքի սկզբունքներին:
117.	Ուսումնառության արդյունք 3	Ընտրել տարրերը, ավտոմատիկայի և ավտոմատ կարգավորման սխեմաները իրական սարքավորումների համար
118.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ընտրում ավտոմատիկայի և ավտոմատ կառավարման տարրերը, 2) ճիշտ է կազմում ավտոմատ կարգավորման սխեմաները, 3) ճիշտ է կիրառում ավտոմատիկայի միջոցների սպասարկումը և թեսթավորումը, 4) ճիշտ է օգտագործում բժշկական տեխնիկայի կազմում ընդգրկված ռելեային ավտոմատիկայի սխեմաները, 5) ճիշտ է կատարում ավտոմատ կարգավորման համակարգերի սպասարկումը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԾԱԳՐԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՍԽԵՄԱՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ»		
119.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-009
120.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ մասնագիտական աշխատանքային գծագրեր կարդալու և հասկանալու , պարզագույն մոնտաժման գծագրեր և ուրվագծեր կատարելու կարողություններ:
121.	Մոդուլի տևողությունը	54 ժամ
122.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԲՏՄՆ-5-21-001 «Ճարտարագիտական գրաֆիկա» և ԲՏՄՆ-5-21-005 «Էլեկտրոնային և միկրոպրոցեսորային տեխնիկա» մոդուլները:
123.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

124.	Ուսումնառության արդյունք 1	Մշակել մոնտաժման սխեմաների գծագրեր և ուրվագծեր
125.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կազմում էլեկտրական սխեմաների անվանացուցակները, 2) ճիշտ է կիրառում նյութերի պայմանական նշագրումները, 3) ճիշտ է կազմում բժշկական սարքերի համար անհրաժեշտ ներքին էլեկտրացանցի մոնտաժման սխեմաների առաջադրած գծագրերը, 4) ճիշտ է կազմում լուսավորման սարքավորումների մոնտաժման սխեմաների առաջադրած գծագրերը, 5) ճիշտ է կազմում էլեկտրական շարժիչների մոնտաժման սխեմաների առաջադրած գծագրերն ու ուրվագծագրեր, 6) ճիշտ է կազմում տրանսֆորմատորների մոնտաժման սխեմաների առաջադրած գծագրերն ու ուրվագծագրեր, 7) ճիշտ է կազմում էլեկտրասարքավորումների մոնտաժման սխեմաների գծագրերը, 8) ճիշտ է կազմում էլեկտրասարքավորումների հանգույցների ուրվագծերը:
126.	Ուսումնառության արդյունք 2	Կարդալ տեխնոլոգիական գծագրեր
127.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կարդում բժշկական սարքերի համար անհրաժեշտ ներքին էլեկտրական ցանցի մոնտաժման առաջադրած գծագրերը, 2) ճիշտ է կարդում մալուխային գծերի մոնտաժման առաջադրած գծագրերը, 3) ճիշտ է կարդում բժշկական սարքերի համար անհրաժեշտ լուսավորման սարքավորումների մոնտաժման առաջադրած գծագրերը, 4) ճիշտ է կարդում էլեկտրական շարժիչների մոնտաժման առաջադրած գծագրերը, 5) ճիշտ է կարդում տրանսֆորմատորների մոնտաժման սխեմաների առաջադրած գծագրերը:
128.	Ուսումնառության արդյունք 3	Կատարել կատարելագործվող հանգույցների և փորձնական նմուշների ուրվագծեր
129.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կատարում շահագործվող էլեկտրական սխեմաների կատարելագործված ուրվագծեր, 2) ճիշտ է կատարում փորձարկման էլեկտրական սխեմաների կատարելագործված ուրվագծեր, 3) ճիշտ է կատարում մոնտաժման էլեկտրական սխեմաների կատարելագործված ուրվագծեր:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԻ»		

130.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-010
131.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ տարբեր ֆիզիկական սկզբունքներով գործող ազդանշանների առաջնային կերպափոխիչների, դրանցով ստացված ազդանշանների ձևավորման սխեմաների վերաբերյալ և գործնականում դրանք կիրառելու կարողություններ:
132.	Մոդուլի տևողությունը	72 ժամ
133.	Մուտքային պահանջներ	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԲՏՄՆ-5-21-009 «Աշխատանքային գծագրերի և էլեկտրական սխեմաների մշակման կարողություններ», ԲՏՄՆ-5-21-006 «էլեկտրատեխնիկական նյութերի ընտրություն» և ԲՏՄՆ-5-21-007 «Չափագիտություն, ստանդարտացում, սերտիֆիկացում» մոդուլները:
134.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
135.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ազդանշանների առաջնային կերպափոխիչները և դրանց կիրառությունը
136.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է դասակարգում ազդանշանների առաջնային կերպափոխիչները՝ ըստ դրանց հիմքում ընթացող ֆիզիկական երևույթների, 2) ճիշտ է ներկայացնում ազդանշանի առաջնային կերպափոխիչի դերն օբյեկտի պարամետրերի հսկման համար, 3) ճիշտ է ներկայացնում ազդանշանի առաջնային կերպափոխիչների հիմնական կիրառությունները:
137.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ազդանշանների առաջնային կերպափոխիչներում ընթացող ֆիզիկական երևույթները
138.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է տարբերակում մեխանիկական տեսակի ազդանշանների առաջնային կերպափոխիչները, բացատրում է դրանց աշխատանքը, կարողանում է գործնականում ճիշտ կիրառել դրանք, 2) ճիշտ է տարբերակում ջերմային տեսակի ազդանիշանների առաջնային կերպափոխիչները, բացատրում է դրանց աշխատանքը, գործնականում ճիշտ է կիրառում դրանք, 3) ճիշտ է տարբերակում պլեզոէլեկտրական տեսակի ազդանշանների առաջնային կերպափոխիչները, բացատրում է դրանց աշխատանքը, գործնականում ճիշտ է կիրառում դրանք,

		<p>4) ճիշտ է տարբերակում ռեզիստիվ, ունակային և ինդուկտիվ տեսակների ազդանշանների առաջնային կերպափոխիչները, բացատրում է դրանց աշխատանքը, գործնականում ճիշտ է կիրառում դրանք,</p> <p>5) ճիշտ է տարբերակում մրրկահոսքային, մագնիսաառածական տեսակի ազդանշանների առաջնային կերպափոխիչները, բացատրում է դրանց աշխատանքը, գործնականում ճիշտ է կիրառում դրանք,</p> <p>6) ճիշտ է գնահատում աղմուկների ազդեցությունն ազդանշանների առաջնային կերպափոխիչների աշխատանքի վրա:</p>
139.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել ազդանշանների առաջնային կերպափոխիչների համակցման հիմնական սխեմաների աշխատանքի սկզբունքը և գիտի դրանց գործնական կիրառությունը
140.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում ազդանշանի առաջնային կերպափոխիչի համակցող սխեմայի նշանակությունը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում համակցող սխեման՝ կախված առաջնային կերպափոխիչի տեսակից,</p> <p>3) Կախված առաջնային տվիչի կոնկրետ տեսակից՝ ճիշտ է համալարում համակցող սխեման:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄՆՈՒՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ՓՈԽԱԿԵՐՊԻՉՆԵՐ»		
141.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-011
142.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել անհրաժեշտ գիտելիքներ էլեկտրասնման աղբյուրների հիմնական տեսակների, դրանց կառուցման եղանակների, աշխատանքային ռեժիմների և կիրառությունների վերաբերյալ, տարբեր տեսակի կերպափոխչային սարքավորումների և դրանց վրա կառուցված էլեկտրասնման աղբյուրների վերանորոգման և սպասարկման կարողություններ:
143.	Մոդուլի տևողությունը	90 ժամ
144.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԲՏՄՆ-5-21-003 «էլեկտրատեխնիկա» մոդուլը:
145.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

146.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել էլեկտրասնման աղբյուրների կառուցվածքները, սահմանում ուղղիչների, կոնվերտորների, հաստատուն լարման կարգավորիչների միջոցով կատարվող փոխակերպումները
147.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է որոշում տվյալ կառուցվածքի էլեկտրասնման աղբյուրում կատարվող էլեկտրական էներգիայի փոխակերպումների քանակը, 2) ճիշտ է տարբերակում աղբյուրի առանձին հանգույցները, մեկնաբանում դրանց դերը, 3) ճիշտ է տարբերակում ուղղիչների, կոնվերտորների և հաստատուն լարման կարգավորիչների միջոցով էներգիայի փոխակերպումների եղանակները:
148.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել ուղղիչների հիմնական սխեմաները, դրանց աշխատանքի սկզբունքը և կիրառությունը
149.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում ուղղիչների հիմնական սխեմաները, բացատրում դրանց աշխատանքը, 2) ճիշտ է կատարում չափումներ ուղղիչի լաբորատոր ստենդի կամ փորձանմուշի վրա՝ ըստ տեխնիկական առաջադրանքի, 3) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:
150.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել հաստատուն լարման կարգավորիչների, կոնվերտորների հիմնական սխեմաները, դրանց տարրերի դերը և աշխատանքային ռեժիմները
151.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում հաստատուն լարման պարամետրական կայունարարի սխեման և աշխատանքի սկզբունքը, 2) ճիշտ է ներկայացնում հաստատուն լարման կոմպենսացման կայունարարի աշխատանքի սկզբունքը, 3) ճիշտ է ներկայացնում կոնկրետ սխեմայի աշխատանքը, 4) ճիշտ է ներկայացնում հաստատուն լարման իմպուլսային կարգավորիչների և կոնվերտորների հիմնական սխեմաները, դրանց բնութագրիչ հատկությունները, 5) ճիշտ է ներկայացնում իմպուլսային կարգավորիչներում և կոնվերտորներում տարրերի դերը և աշխատանքային ռեժիմները, 6) ճիշտ ներկայացնում իմպուլսային կարգավորիչների միջոցով հաստատուն հոսանքի շարժիչի կառավարման

		<p>սկզբունքը,</p> <p>7) ճիշտ է կատարում է կարգավորիչի, կոնվերտորի պարամետրերի չափումներ՝ ըստ տեխնիկական առաջադրանքի,</p> <p>8) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
152.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել էլեկտրասնման աղբյուրում հարթեցնող զտիչ(ներ)ի դերը, տարբերակել սխեմաները, հաշվարկել ուղղիչի պարզագույն զտիչի սխեման
153.	Կատարման չափանիշներ	<p>1) ճիշտ է ներկայացնում զտիչների տարատեսակները և սխեմաները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում էլեկտրասնման աղբյուրում զտիչ հանգույց(ներ)ի նշանակությունը,</p> <p>3) ճիշտ է հաշվարկում պարզագույն ունակային զտիչի կոնդենսատորի էլեկտրաունակությունը,</p> <p>4) ճիշտ է կատարում զտիչի պարամետրերի չափումները՝ ըստ տեխնիկական առաջադրանքի,</p> <p>5) պահպանում է աշխատանքի անվտանգության կանոնները:</p>
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ »		
154.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-012
155.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել մասնագիտական գործունեության ընթացքում բժշկական սարքերի և սարքավորումների վերաբերյալ փաստաթղթաշրջանառության կարողություններ:
156.	Մոդուլի տևողությունը	48 ժամ
157.	Մուտքային պահանջները	Մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
158.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

159.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել ստանդարտացման նորմատիվային փաստաթղթերը
160.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում էլեկտրատեխնիկական բաղադրամասերի տերմինաբանական ստանդարտները, 2) ճիշտ է ներկայացնում էլեկտրատեխնիկական բաղադրամասերի պարամետրերի չափման մեթոդների ստանդարտները, 3) ճիշտ է օգտվում անհրաժեշտ ստանդարտից և նորմատիվային փաստաթղթերից՝ բժշկական սարքերի և սարքավորումների տեղակայման, շահագործման, փորձարկման աշխատանքներում:
161.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել փաստաթղթերի տեսակները
162.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում փաստաթղթավորման նշանակությունը, 2) ճիշտ է ներկայացնում գործավարական փաստաթղթերի տեսակները, 3) ճիշտ է ներկայացնում տեխնիկական փաստաթղթերի տեսակները, 4) ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի վավերապայմանները:
163.	Ուսումնառության արդյունք 3	Կազմել գործավարական փաստաթղթեր
164.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է կազմում վերանորոգված կարգավորված էլեկտրասարքավորումների հանձնման-ընդունման ակտը, 2) ճիշտ է կազմում էլեկտրասարքավորումների հսկման արդյունքների ամփոփման փաստաթղթեր, 3) ճիշտ է կազմում բժշկական սարքերի և սարքավորումների հետազոտման արդյունքների մասին փաստաթղթեր, 4) ճիշտ է կազմում բժշկական սարքերի և սարքավորումների փորձարկման ակտերը:
165.	Ուսումնառության արդյունք 4	Կազմել տեխնիկական փաստաթղթերը
166.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է ներկայացնում կազման համար առաջադրված տեխնիկական փաստաթղթերի համար անհրաժեշտ տվյալները, 2) ճիշտ է հիմնավորում տեխնիկական փաստաթղթերի կազմման համար ներկայացված տվյալները, 3) ճիշտ է կազմում առաջադրած տեխնիկական փաստաթուղթը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱԶԱՅԻՆ ՏԵՍԱԿԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՉԱՓԻՉ, ԱԽՏՈՐՈՇԻՉ ՍԱՐՔԵՐ»		

167.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-013
168.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ բժշկական էլեկտրոնային չափիչ, ախտորոշիչ սարքերի ընդհանուր կառուցվածքի, դրանցում ընթացող երևույթների, դրանց նկատմամբ ներկայացվող պահանջների, դրանց միջոցով իրականացվող հետազոտությունների, դրանց հիմնական հանգույցների վերաբերյալ, բժշկական էլեկտրոնային չափիչ, ախտորոշիչ սարքերի օգտագործման, դրանց տեղադրման, վերանորոգման և սպասարկման վերաբերյալ կարողություններ:
169.	Մոդուլի տևողությունը	108 ժամ
170.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԲՏՄՆ-5-21-005 «Էլեկտրոնային և միկրոպրոցեսորային տեխնիկա» և ԲՏՄՆ-5-21-012 «Փաստաթղթաշրջանառություն» մոդուլները:
171.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
172.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերը, դրանց տեղադրման, վերանորոգման և սպասարկման տեխնոլոգիաները
173.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերի դերը, բազային տեսակների ընդհանուր կառուցվածքը, դրանց ներկայացվող հիմնական պահանջները և տեխնիկական բնութագրերը, 2) ճիշտ է բացատրում բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերի բազային տեսակների հիմնական մասերի նշանակությունը, 3) ճիշտ է բացատրում բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերի բազային տեսակների հիմնական մասերի փոխադարձ կապը և փոխազդեցությունը, 4) ճիշտ է բացատրում բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերի բազային տեսակների տեղադրման, վերանորոգման և սպասարկման տեխնոլոգիաները:

174.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերը, դրանց վերանորոգման և սպասարկման գործընթացները
175.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում բժշկական էլեկտրոնային ջերմաչափերի, զարկերակաճնշաչափերի, պուլսօքսիմետրերի, կշեռքների աշխատանքի սկզբունքները, հիմնական բնութագրերը, առանձնահատկությունները և դրանց ներկայացվող պահանջները, 2) ճիշտ է բացատրում ջերմաչափերի, զարկերակաճնշաչափերի, պուլսօքսիմետրերի, կշեռքների բազային տեսակների ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում ջերմաչափերի, զարկերակաճնշաչափերի, պուլսօքսիմետրերի, կշեռքների յուրաքանչյուրի բազային տեսակների առաջնային տվիչների, նրանցից ստացվող անալոգային ազդանշանների փոխակերպիչների աշխատանքի սկզբունքները և ընդհանուր կառուցվածքները, 4) ճիշտ է ներկայացնում ջերմաչափերի, զարկերակաճնշաչափերի, պուլսօքսիմետրերի, կշեռքների յուրաքանչյուրի բազային տեսակների ազդանշանների փոխակերպիչներից ստացվող թվանշանային ինֆորմացիայի նախնական և հետպրոցեսային մշակումներ իրականացնող հանգույցների աշխատանքի սկզբունքները և ընդհանուր կառուցվածքները, 5) ճիշտ է ներկայացնում բժշկական էլեկտրոնային ջերմաչափերի, զարկերակաճնշաչափերի, պուլսօքսիմետրերի, կշեռքների օգտագործման գործընթացը, 6) ճիշտ է ներկայացնում բժշկական էլեկտրոնային ջերմաչափերի, զարկերակաճնշաչափերի, պուլսօքսիմետրերի, կշեռքների ստուգումների և փոձարկումների գործընթացը, 7) ճիշտ է ներկայացնում բժշկական էլեկտրոնային ջերմաչափերի, զարկերակաճնշաչափերի, պուլսօքսիմետրերի, կշեռքների վերանորոգման և սպասարկման գործընթացը:
176.	Ուսումնառության արդյունք 3	Ներկայացնել բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերը, դրանց տեղադրման, վերանորոգման և սպասարկման գործընթացները
177.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների (էլեկտրաուղեղագրերի), էլեկտրամիոգրաֆների (էլեկտրամկանագրերի) աշխատանքի սկզբունքները, առանձնահատկությունները,

		<p>հիմնական բնութագրերը և դրանց ներկայացվող պահանջները, բազային տեսակների ընդհանուր կառուցվածքը,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների, յուրաքանչյուրի բազային տեսակների առաջնային տվիչների, նրանցից ստացվող անալոգային ազդանշանների փոխակերպիչների աշխատանքի սկզբունքները և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների, յուրաքանչյուրի բազային տեսակների ազդանշանների փոխակերպիչներից ստացվող թվանշանային ինֆորմացիայի նախնական և հետպրոցեսային մշակումներ իրականացնող հանգույցների աշխատանքի սկզբունքները և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների, յուրաքանչյուրի բազային տեսակների գրանցումներ իրականացնող հանգույցների աշխատանքի սկզբունքները և ընդհանուր կառուցվածքը,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների, յուրաքանչյուրի բազային տեսակների էլեկտրասնուցման աղբյուրներին ներկայացվող տեխնիկական պահանջները, դրանց բավարարման ձևերը, տեխնիկական իրականացումները,</p> <p>6) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների բնականոն աշխատանքի համար պահանջվող աշխատանքային հողանցումների և էլեկտրասնուցմանը վերաբերող պահանջները,</p> <p>7) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների օգտագործման գործընթացը,</p> <p>8) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների ստուգումների և փորձարկումների գործընթացը,</p> <p>9) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների տեղադրման, վերանորոգման և սպասարկման գործընթացները:</p>
--	--	--

178.	Ուսումնառության արդյունք 4	Ներկայացնել բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերը, դրանց տեղադրման, վերանորոգման և սպասարկման գործընթացները
179.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում բժշկական էլեկտրոնային ախտորոշիչ և չափիչ սարքերի՝ շնչաչափագրական /սպիրոմետր, սպիրոգրաֆ/ աշխատանքի առանձնահատկությունները, հիմնական բնութագրերը և դրանց ներկայացվող պահանջները, 2) ճիշտ է բացատրում շնչաչափագրական /սպիրոմետր, սպիրոգրաֆ/ սարքերի բազային տեսակների ընդհանուր կառուցվածքը, 3) ճիշտ է ներկայացնում շնչաչափագրական /սպիրոմետր, սպիրոգրաֆ/ յուրաքանչյուրի բազային տեսակների առաջնային տվիչների, նրանցից ստացվող անալոգային ազդանշանների փոխակերպիչների աշխատանքի սկզբունքները և ընդհանուր կառուցվածքը, 4) ճիշտ է ներկայացնում շնչաչափագրական /սպիրոմետր, սպիրոգրաֆ/ յուրաքանչյուրի բազային տեսակների ազդանշանների փոխակերպիչներից ստացվող թվանշանային ինֆորմացիայի նախնական և հետպրոցեսային մշակումներ իրականացնող հանգույցների աշխատանքի սկզբունքները և ընդհանուր կառուցվածքը, 5) ճիշտ է ներկայացնում շնչաչափագրական /սպիրոմետր, սպիրոգրաֆ/ յուրաքանչյուրի բազային տեսակների գրանցումներ իրականացնող հանգույցների աշխատանքի սկզբունքները և ընդհանուր կառուցվածքը, 6) ճիշտ է ներկայացնում շնչաչափագրական /սպիրոմետր, սպիրոգրաֆ/ յուրաքանչյուրի բազային տեսակների էլեկտրասնուցման աղբյուրներին ներկայացվող տեխնիկական պահանջները, դրանց բավարարման ձևերը, տեխնիկական իրականացումները 7) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրաուլտրագրերի էլեկտրամիոգրաֆների բնականոն աշխատանքի համար պահանջվող աշխատանքային հողանցումների և էլեկտրասնուցմանը վերաբերող պահանջները 8) ճիշտ է ներկայացնում սպիրոմետր, սպիրոգրաֆ ստուգումների և փոձարկումների գործընթացը, 9) ճիշտ է ներկայացնում էլեկտրասրտագրիչների, էլեկտրաուլտրագրերի էլեկտրաէնցեֆալոգրաֆների, էլեկտրամիոգրաֆների տեղադրման, վերանորոգման և սպասարկման գործընթացները:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՌԵՆՏԳԵՆՅԱՆ ԱԽՏՈՐՈՇԻՉ ՍԱՐՔԵՐ»

180.	Մոդուլի դասիչը	ԲՏՄՆ-5-21-014
181.	Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ բժշկական ռենտգենյան օպտորոշիչ սարքերի ընդհանուր կառուցվածքի, նրանցում ընթացող երևույթների, դրանց նկատմամբ ներկայացվող պահանջների, դրանց միջոցով իրականացվող հետազոտումների, դրանց հիմնական հանգույցների վերաբերյալ, ինչպես նաև բժշկական ռենտգենյան օպտորոշիչ սարքերի օգտագործման, դրանց տեղադրման, վերանորոգման և սպասարկման վերաբերյալ գործնական կարողություններ:
182.	Մոդուլի տևողությունը	108 ժամ
183.	Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԲՏՄՆ-5-21-004 «Կիրառական մեխանիկա», ԲՏՄՆ-5-21-007 «Չափագիտություն, ստանդարտացում և սերտիֆիկացում» և ԲՏՄՆ-5-21-012 «Փաստաթղթաշրջանառություն» մոդուլները:
184.	Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
185.	Ուսումնառության արդյունք 1	Ներկայացնել բժշկական ռենտգենյան օպտորոշիչ սարքերի բազային տեսակները, դրանց տեղադրման, վերանորոգման և սպասարկման գործընթացները
186.	Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) ճիշտ է բացատրում բժշկական ռենտգենյան օպտորոշիչ սարքերի դերը, բազային տեսակների ընդհանուր կառուցվածքը, դրանց նկատմամբ ներկայացվող հիմնական պահանջները և տեխնիկական բնութագրերը, 2) ճիշտ է բացատրում բժշկական ռենտգենյան օպտորոշիչ սարքերի բազային տեսակների հիմնական մասերի նշանակությունը, 3) ճիշտ է բացատրում բժշկական ռենտգենյան օպտորոշիչ սարքերի բազային տեսակների հիմնական մասերի փոխադարձ կապը և փոխազդեցությունը:

187.	Ուսումնառության արդյունք 2	Ներկայացնել բժշկական ռենտգենյան ախտորոշիչ սարքերը
